լեռներու վրայ, մի հատ ևս Ամատայ հիւսիսային կողմ բարձր լեռան մի վրայ. Ամատայ բերդ, որ վերջին դարուս ևս պատսպարան եղած է։

Այս բերդերու պարիսպներն մեծաւ մասամբ հիւսուած են հսկայ և կոշտ քարերով, որով ցոյց կտան դարաւոր հնութիւններ, կան նաև քանի հատ սրբատաշ քարերով շինուած բերդեր։

Ալաշկերտի դաշտի միջավայրն կայ նաև Ելնի Թափա (Բլուր) գիւղի մօտ արհեստական հողաբլուր մի, գագաթը 1½-2 արտավար տարածութեամբ, որ իբրև բերդ կարող էր գործածուիլ նոյն գիւղը պահպանելու համար, սակայն ըստ իս դա հնութիւն լինելու է, կամ ծածկեալ կռատուն և կամ երևելի անձի մի հանգստարան եղած է։

ՋՐԱՇԱՏ ԵՐԿԻՐ

Բագրևանդայ հիւսիսային լեռնաշղթայն Ջրաբաշխ ասուած է ի նախնեաց ամեն կողմ առատ ջրեր արձակելուն. հարիւրաւոր հովիտներ, լեռներ ու սարահարթներ. արեգններ ու ծմակներ. տափարակներ և զառիվայրեր. մէկ խօսքով դաշտ և լեռ, մեծ և փոքր աղբիւրներով զարդարուած են. ամեն վայր տարածուած, սփռուած են յստակ, սառն, քաղցրահամ ջրեր. իւրաքանչիւր տեսարանի մէջ քեզ կներկայանայ գլգլացող աղբիւրի ակ մի, կարկաչող առուակ մի, սողացող առու մի, ոլոր մոլոր հոսող ջրուղի մի, չըրչըրացող նեղ և լայն ձորակ մի, գետեր և գետակներ, աղի, լեղի աղբիւրներ, ջրալից և ճահճային վայրեր, պսպղուն փոքրիկ և մեծ լճակներ ու լճեր։ Այսպիսի ջրաշատ երկիր